# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

## ԳԿ-ԳՀԱՊՁԲ-23/7 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **23 հոկտեմբերի 2023թ.**

2023թ-ի հոկտեմբերի 23-ին, ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22 հասցեում գտնվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի շենքում տեղի ունեցավ գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման ԳԿ-ԳՀԱՊՁԲ-23/7 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Մովսիսյան՝ | Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ, |
| Տ. Հարությունյան՝ | «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ, |
| Գ. Հովհաննիսյան՝ | «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ, |
| Լ. Ղազարյան՝ | Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնի ավագ հաշվապահ, |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Մովսիսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Է. Ավագյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի չորս անդամները, բացակայում էր Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնի հաշվապահական հաշվառման բաժնի փորձագետ՝ Ա. Մալազյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Կասեցված գնման ընթացակարգի վերսկսման և Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի 2023թ-ի օգոստոսի 31-ի 1/35-Ա հրամանով ձևավորված մասնագիտական խորհրդի կայացված եզրակացության վերաբերյալ:

2. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

3. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 1. ԿԱՍԵՑՎԱԾ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՎԵՐՍԿՍՄԱՆ և ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2023Թ-Ի ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի 1/35-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՅԱՑՎԱԾ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԿ-ԳՀԱՊՁԲ-23/7 ծածկագրով գնման ընթացակարգը կասեցվել էր մինչև համապատասխան մասնագիտական խորհրդի եզրակացության տրամադրումը: Նշվածով պայմանավորված և հաշվի առնելով Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի 2023թ-ի օգոստոսի 31-ի 1/35-Ա հրամանով ձևավորված մասնագիտական խորհրդի կողմից ներկայացված եզրակացությունը (այսուհետև՝ Եզրակացություն), որոշվեց դադարեցնել գնման ընթացակարգի կասեցումը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ներկայացված Եզրակացությունը՝ (կցվում է) որոշվեց գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունների տեքստերը թողնել անփոփոխ:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի

նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Մովսիսյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Տ. Հարությունյան ____________

Գ. Հովհաննիսյան ____________

Լ. Ղազարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Է. Ավագյան ____________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի 2023 թվականի օգոստոսի 23-ի 1/35-Ա հրամանով ձևավորված մասնագիտական խորհրդի նիստի

ք. Երևան 05.10.2023 թ.

***Մասնակցում էին՝***

| | |
|---|---|
| Գասպարյան Արսեն | «ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» -տնօրեն, ֆմ.գ.թ. (համաձայնությամբ), |
| Պապոյան Արամ | «ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ», տնօրեն, ֆմ.գ.դ. (համաձայնությամբ), |
| Գալստյան Արմեն | «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ – Ասիմետրիկ կատալիզի խմբի ղեկավար, ֆմ.գ.թ. (համաձայնությամբ), |
| Տեփանոսյան Գևորգ | «ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» - Շրջակա միջավայրի երկրաքիմիայի բաժնի ղեկավար (համաձայնությամբ) |
| Մովսիսյան Արտուր | ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ (նիստի քարտուղար): |

***Օրակարգում՝***

- «Փրոմռուշն» ՍՊԸ-ի կողմից զեկուցագրով ներկայացված հարցի վերաբերյալ տալ մասնագիտական եզրակացություն

***Ա. Մովսիսյանը*** Խորհրդի անդամներին ներկայացրեց առկա փաստաթղթերը.

Խորհրդի անդամները ուսումնասիրեցին և քննարկեցին ներկայացված փաստաթղթերը: Կապ հաստատեցին գնման առարկա սարքի շահառու Տ. Հարությունյանի հետ և լսեցին նրա հիմնավորումները և ներկայացվող ապրանքի անհամապատասխանությունը սահմանված չափանիշներին,

Կապ հաստատեցին «Յունիլաբ» ՍՊԸ ի տնօրեն Ս. Ասլիզադյանի հետ և խնդրեցին լրացուցիչ տեղեկություններ, մասնավորապես առաջարկվող կոնկրետ մոդելի վերաբերյալ տալ տեխնիկական բնութագիր և լրացուցիչ հիմնավորումներ:

***Որոշեցին՝***

*14.09.2023թ-ին*

1. «Յունիլաբ» ՍՊԸ ի տնօրենի առաջարկով նիստը կասեցնել յոթ օրով, որպեսզի «Յունիլաբ» ՍՊԸ-ի տնօրենը կարողանա չինական արտադրողից վերցնել պահանջվող տեղեկությունը:

05.10.2023 թ.-ին Խորհուրդը

1. Քննարկեց «Յունիլաբ» ՍՊԸ-ի տնօրենի ներկայացված լրացուցիչ փաստաթղթերը, որոնք էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել էին Ա. Մովսիսյանին:
2. Արձանագրեց, որ «Յունիլաբ» ՍՊԸ-ի կողմից չի ուղարկվել պահանջվող տեղեկատվությունը, այլ ուղարկվել է հին գնառաջարկը և կարճ պարզաբանում, որտեղ նույնպես բացակայում է լիարժեք տեղեկություն պատկերացում կազմելու, որ առաջարկվող մոդելը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին (բոլոր փաստաթղթերը կցվում են):

***Որոշեցին՝***

1. «Յունիլաբ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները համարել ոչ հիմնավոր:
2. ԳԿ-ԳՀԱՊՁԲ-23/7 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանաձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 08-ի արձանագրության որոշումը հիմնավոր է, քանի որ «Յունիլաբ» ՍՊԸ-ի առաջարկած մոդելը չի համապատասխանում ընթացակարգի հրավերով սահմանված չափանիշներին:

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Պապոյան

Ա. Գալստյան

Գ. Ստեփանոսյան

Ա. Գասպարյան